

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1955 ՅՈՒՆՈՒԱՐ - ՓԵՏՐՈՒԱՐ Թ. 1-2

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՃԱՆԱՇԵԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ. - Կառնիք մեր մշա-
կայթի 1

ԳՐԱԿԱՆ

ՃԱՆԱՇԵԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ. - Եղիա Տէմիրճիպաշեան
(շար.) 4

ՔԱՋԱՐԵՆՅ ՀՐԱՁ. - Լոյսին մէջ լոյս 41

» » - Համբոյր մասունքներուն 42

ՍՐԱՊԵԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ. - Քաթիւշա 42

ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԻՍԱՔԵԱՆ ԲԺ. Պ. - Լուի Փաստէ (1822-1895)
Է. Գիտական Նշանակութիւնը (շար.) 21

ԳԻՏԱԿԱՆ

ՔԵԱՆՆԱՅԵԱՆ ԲԺ. ԱՆԱՆԻՏ. - Գրամմատիկան
(Grafologia) իբրեւ գիտութիւն 33

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ԵՐԵՄԵԱՆ ԱՐԱՄ. - Երաժշտական վարդան վրդ.
Արեւելի 38

ԼԵՁՈՒԱԿԱՆ

ՏԵՐ ՆԵՐՍԵՍԵԱՆ Հ. Ն. - Ի սէր «Մեծաքանչ»ին. 45

ՍԶԳՈՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԽՄԲ. - Արամ Երեմիանի 35-ամեայ զրական զոր-
ծունէութեան յարգանք 39

SOMMAIRE

1955 Janvier - Février N. 1-2

PAGE

ARTICLE DE FOND

Djanachian P. Mesrob. - Attachons nous à
notre culture 2

LITTERATURE

Djanachian P. M. - Elie Démirdjibachian
(suite) 4

Khatcharentz Hratch. - Lumière dans la
lumière 41

» » - Baiser aux reli-
ques 42

Serabian Aramaïs. - Kathucha 42

HISTOIRE

Missakian Dr. B. - Louis Pasteur (1822-1895)
Les conquêtes scientifiques (suite) 21

SCIENCE

Kyahyayan Anahid. - La graphologie comme
science 33

BEAUX ARTS

Yérémian Aram. - Le musicien Vardan Vrd.
l'Oriental 38

LINGUISTIQUE

Der Nersessian P. N. - Pour amour du « Mé-
zaskantch » 45

ECHO ARMÉNIEN

Réd. - Le jubilé de Mr. Aram Yérémian 39

ԲԱՋՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 - 1955

ՃԺԳ. Տ Ա Ր Ի



ՅՈՒՆՈՒԱՐ-ՓԵՏՐՈՒԱՐ

ԹԻՒ 1-2

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿԱՌԶԻՆՔ ՄԵՐ ՄՇԱԿՈՅԹԻՆ

Համրական մղձաւանջ մը դարձած է այսօր աիերէ աի ցրուած հայութեան համար ինքնապահպանումի հարցը: Ու խմբագիրներ ամանորի սեմին՝ կը բանա- ճեւեն տեսութիւններ, մաղքանքներ՝ ար- ծարծելու խարոյկը ազգասիրական զգա- ցումներու: «Բազմավէպ» այդ պարտքը կատարած է ամէն տարի, ընդհանուր ներ- դաշնակութեան հետ խառնելով իր ձայնն ալ, ջերմացնելով սրտերը եւ լոյսի կայծ մը նետելով մտքերու համար: Դիւրին է ազգային կեանքը հոն՝ ուր կայ սրտերու միութիւն, եւ մանաւանդ կայ գործի, նոյն նպատակին ձգտող ծրագիրներու ներքին համերաշխութիւն եւ համընթա- ցութիւն: Բայց ո՛րքան այլազան է ընդ- հանուր պատկերը Սփիւռքի հայութեան, որ ստիպողաբար կապուած է հիւրընկա- լող երկիրներու քաղաքական, ընկերային պայմաններուն: Յրուած ոյժ մըն է հետե-

ւաբար հայ զանգուածինը, եւ ենթարկ- ուած այլեւայլ ազդերու օրէնքներուն, պարտադրութիւններուն, եւ ցաւալի է ը- սել՝ նաեւ երբեմն կաշկանդումներուն:

Բայց հայ ոգին, եթէ յաղթած է դարե- րու, պիտի յաղթէ նաեւ տարիներու: Լը- փում ոչ երբեք: Ցեղային իրաւունքներու ձայնը հզօր է, հզօր է նաեւ արդարու- քեան ձայնը, որ պիտի չուշանայ յայտ- նուելու ուշ կամ կանուխ՝ երբ հասնի ժա- մը, գրուած Նախախնամութեան տոմարին մէջ: Ի՞նչ է պարտականութիւնը մէն մի հայուն: Յուսալ եւ սիրել: Յուսալ ապա- գային վրայ եւ սիրել իր ազգակիցները ո՛ր ալ ըլլան անոնք, եւ ցանկալ համա- զանգուածային միութեան, հալեցնելով ընդհանուր շահին մէջ անհատական տե- սութիւնները, անձնական շահադիտու- քիւնները:

Ներկայիս սիրոյ եւ գուրգուրանքի մի-

ԲԱՋՄԱՎԷՊ

ակ առարկան բոլոր հայերու համար ան-
խնայ՝ ըլլալու է ազգային լեզուի եւ մը-
շակոյթի փրկութիւնը: Ս. Մեսրոպէն ա-
ւանդուած փրկութեան այդ լաստը չէ՞
ապահոված մեզի ցարդ գոյութեան իրա-
ւունքը, երբ աղէտներ, երբ գաղթակա-
նութիւններ, երբ պատերազմներ առած
տարած են բեկորները մեր ժողովուրդին
ու նետած օտար ափեր: Այդ խեղճները,
այդ բոկոսն մանկութիւնը եւ պատանե-
կութիւնը ի՞նչպէս փրկուած է. — կանչե-
լով մի միայն իր լեզուին, իր պատմու-
թեան, եւ ընդհանուր միակ արտայայ-
տութեամբ՝ իր մշակոյթին:

Ահա ճիշտ բառը. ահա եւ անոր իսկա-
կան նշանակութիւնը՝ լաստ ազգային փր-
կութեան: Կարելի՞ է տարակոյսի տակ
առնել գայն, կարելի՞ է պահ մը դեղեւիլ
անոր կատարած անսահման դերին մասին,
որով երկարաձգուած է կեանքը գաղութա-
հայութեան: Մշակոյթ է ամէն ինչ՝ որ
կապ ունի ազգային գոյնի, հայ ծէսի,
հայ խորհելակերպի, հայ պատմութեան,
հայ գրականութեան, հայ երգի հետ: Այս
առընչութիւնը սերտ է եւ խոր արմատնե-
րով կապուած հայ հոգիին հետ, ուր ալ
գտնուի ան, քանի որ սրտէն կը բղխի եւ
մտքի բեղնաւորումին տակ կ'ուռնանայ,
կը ծաւալի, կը պտղաբերէ: Սրտի մամբան
դիրքին է՝ երբ մտքի հաղորդականու-
թիւնը, երբ մտքի լոյսին գծած ուղին՝
համաձայն կ'ընթանայ ազգային զգացում-
ներուն: Ծրագիր եւ ուղղութիւն անհրա-
ժեշտ պայմանն է ո՛ր եւ է գործի մը յա-
ջողութեան: Պիտի ըսեն շատեր՝ ունին
մենք ալ ծրագիր, ունինք մանաւանդ կազ-
մակերպութիւններ՝ բազմադիմի ենթա-
բաժանումներով: Բայց ինչո՞ւ հանրական

գիծ մը զանոնք չի միացներ եւ արդիւնքին
իրականութիւնը չի խանդավառեր մեզ
այսօր: Անշուշտ այդ վերքին ցարդ ուժգին
կը կոտտայ մեր հոգիէն ներս, եւ շատ մը
գեղեցիկ ծիւեր ցամփեցուցած է իրենց ար-
մատէն: Երբ այսպիսի պարագաներու մէջ
մտէն գալիք առաջնորդութիւնը կը կա-
սի՝ գէշ սիրտը մնայ պարիսպներուն վը-
րայ: Սիրտը որ սիրոյ մէջ ամէ՛ն ինչ է:

Ըսինք վերը թէ մեր պայքարին ա-
ռանցքները երկու են. յոյսը եւ սէրը: Եթէ
յոյսը գեղեցիկ ակնկալութիւնն է, ան-
խորտակելի թեւերը երազին, սէրը ոգեւո-
րիչ ոյժն է, լծորդը սրտերու: Սէր ան-
խնայ իր բոլոր անոնց հանդէպ՝ որ կը
պատկանին մեր ցեղային նոյնութեան կամ
հասարակութեան: Ու սէր՝ որ կը դառնայ
մանաւանդ Հայ Մշակոյթին շուրջ: Եթէ
համոզուած ենք որ հայ ոգին անով կը
սնանի ու կ'ապրի, հարկ է կեդրոնանալ՝
գայն աւելի եւս արմատացնելու մեր մեծ
ու փոքր գաղութներուն մէջ: Եկեղեցի,
դպրոց, մամուլ՝ ահաւասիկ ինչ որ պի-
տի կարենան գայն խորագոյն կերպով ներ-
գործիչ ոյժ մը դարձնել: Ազգային մը-
շակոյթը այդ նամբով պիտի դառնայ
հասկնալի, նաշակելի եւ սիրելի: Այսօր
քրիստոնէական դրօշին տակ ապաստան
գտած հայութեան համար միակ փրկարար
գէնքը ազգային *լեզուն* է անժխտելիօրէն,
կամ լայն ձեւով մը՝ *Մշակոյթը*: Ատով
մարդկային ընդհանրութենէն պիտի գա-
նազանութիւնք որպէս գաւակները ազնուա-
կան ազգի մը որ յանուն կրօնի եւ գա-
ղափարի ազատութեան պայքարած է եւ
իր բաժինը բերած քաղաքակրթական մար-
գերու մէջ: «Վարդանանց» դիւցազներգու-
թիւնը պէտք է կրկնուի այսօր մշակութա-

յին ուղղութեամբ, քանի որ փոխուած են
պարագաները: Այդ համոզումով վերա-
ծնունդի անմահ Հիմնադիրը, իր պատկա-
ռելի յաջորդները՝ հայ ժողովուրդին մէջ
ներմուծել ջանացին ազգային գիտակցու-
թիւն, փարոս աւանդական մտաւոր գե-
ղեցկութիւններուն, լեզուին, ստրկու-
թեան եւ ուժացումի ահաւոր վտանգներէն
փրկելու համար գայն: Եթէ այսօր հայու-
թիւնը կապուած է լեզուին, իր մշակոյ-
թին, այդ բանը չէ՞նք պարտիք միթէ գը-
րատուններու փոշիներէն լոյս աշխարհ
կոչող այն Մեծ Մտքին, որ համակ Սէր
էր նաեւ հանդէպ իր ազգի ժողովուրդին:
Աշխարհաբարի եւ գրաբարի առաջին քե-
րականութիւնները տուող, Հայկագեան
Բառարան մը կերտող Մխիթարն է որ
հասկցած էր իր դարուն պայմանները,
ուղղած էր աչքերը դէպի ճշմարիտ լոյսի
բարձունքները:

Ազգային լեզուի ու մշակոյթի պահ-
պանման ձկտելու է այսօր մեր մէջ ամէն
անհատ, եթէ կ'ուզենք ապահովցնել գո-
յութիւննիս օտարին ծոցը: Անհատը ազգն
է, եւ ազգը՝ անհատներու միութիւնը:
Երբ անհատը կը պայքարի օտարացման
դէմ իր շրջանակին մէջ, իր անձուկ սահ-
մաններուն մէջ, ապահով է նաեւ ամբող-
ջութեան փրկութիւնը, եւ անոր հակա-
ռակէն՝ երբ կը մտնէ անհատներու մէջ

յուսակում եւ անտեսում մայրենի լեզուն
անաղարտ պահելու ճիգերուն, կը մտնէ
անհոգութիւն կազմելու ընտանեկան բոյ-
ներ հայկական գոյնով եւ նկարագրով,
ո՛հ այն ատեն վտանգուած կարելի է հա-
մարիլ ընդհանուրին գոյութիւնը, շահը,
փրկութիւնը: Այս իմաստով ահա անհատը
ազգն է, որովհետեւ կ'երաշխատուի հա-
սարակաց բարիքը, կ'երաշխատուի թափ-
ուած ջանքերուն արգասաւորումը եւ կա-
տարեալ ու ամբողջական հունձքը: Մեզի
պէս ցրուած եւ փոքր ազգի մը համար՝
անհատներու կատարելիք դերը կ'առնէ
արդարեւ խոշոր համեմատութիւններ, նը-
շանակելի իրականութիւն եւ արժէք: Մէն
մի հայ անհատականութիւն երբ իր շրջա-
նակին մէջ կը կատարէ կրթական, հասա-
րակային դեր, կամ կը սատարէ իր նիւ-
թական միջոցներով դպրոցի եւ մամուլի
գարգացման, եւ կամ իր համոզումները
բանաձեւած ատեն կը զգուշանայ վիրա-
ւորել ազգային զգացումը, կը համարինք
թէ ան լրիւ գոհացուցած կ'ըլլայ իր խիղ-
նը եւ նպաստած՝ իր ազգին գոյութեան
պայքարին:

«Նահապետը» հայ պարբերաբերքերու՝
այս իղձով կը շնորհաւորէ իր ընթերցող-
ները, կը շնորհաւորէ իր բոլոր համակիր-
ները եւ կը մաղթէ երջանիկ ամանոր մը:

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ



1639-71